



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ.  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

*Ա. Մանուկյան*



# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆԱՈՒԹՅԱՆ

ԲՓ 96

ԶԵՆՈՆԱՐԿՈՂՅԾ

<<ԳԵՂԻՆՖՈ>> ՍՊԸ

Ք. Երևան, Գյուլիքենվան 35շ, բն.12

Գործունեությունը՝

Ախուրյանի ջրավազանային կառավարման պլանի  
2017-2022թթ միջոցառումների ծրագրի շրջակա  
միջավայրի վրա ազդեցության ուազմավարական  
գնահատման հաշվետվություն

<<Արմավիրի, Արարագի, Շիրակի, Արագածոտնի մարզեր

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԽԱԿ  
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 8 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 96

<<22>> 11 2016թ.

**Ախուրյանի ջրավագանային տարածքի կառավարման պլանի 2017-  
2022 թթ միջոցառումների ծրագրի ռազմավարական գնահատման  
հաշվետվության վերաբերյալ**

Զենոնարկող՝  
Փաստաթղթի տեսակը՝  
Իրականացման վայրը՝

<<Գեղինֆո>> ՍՊԸ  
Հիմնադրութային փաստաթուղթ  
ՀՀ Արմավիրի, Արարատի, Շիրակի, Արագածոտնի,  
մարզեր՝ 6 քաղաքային և 253 գյուղական  
բնակավայրեր


Ախուրյանի ջրավագանային տարածքի 2017-2022թթ ժամանակահատվածի կառավարման պլանի նախագծի հիմնական նպատակն է՝ Ախուրյանի ջրավագանային կառավարման տարածքում (ԶԿՏ) ջրօգտագործողների, ներառյալ՝ համայնքների, Էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունների հավասարակշուումը, ինչպես նաև աջակցել ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու մարմիններին և հանրությանը՝ ջրային ռեսուրսների ոլորտում որոշումներ կայացնելիս:

Սույն հիմնադրութային փաստաթուղթը համարունչ է Հայաստանի Հանրապետության կառավարության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրերին, կառավարման պլանի միջոցառումները մշակվել են ՀՀ ջրային ոլորտի օրենսդրության և ԵՄ ԶՇԴ-ի (Զրի շրջանակային դիրեկտիվ) պահանջների համաձայն: Ջրավագանային կառավարման պլանի իրականացման առանցքը միջոցառումների ծրագիրն (ՍՇ) է, որը նպատակառուղղված է ջրային ռեսուրսների համար սահմանված բնապահպանական նպատակներին հասնելուն: Այն ներառում է ջրային ռեսուրսների առաջարկի և պահանջարկի վերլուծությունը, ջրային ռեսուրսների վրա ձևադրությունն ու ազդեցությունների գնահատումը և սույն պլանով սահմանված բնապահպանական նպատակների իրագործման համար առաջարկվող միջոցառումների ծրագիրը՝ նախնական ֆինանսական գնահատմամբ և գերակա միջոցառումների հատկորոշմամբ:

ՀՀ կառավարության որոշման սույն նախագծով հաշվարկվել են Ախուրյանի ջրավագանային կառավարման տարածքի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները: Ախուրյանի ԶԿՏ-ի համար կատարվել է ջրառաջարկի և ջրապահանջարկի վերլուծություն՝ նախագծային 2017-2022թթ. ժամանակահատվածի համար:

Ախուրյանի ջրավագանային կառավարման տարածքը (ԶԿՏ) գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում, սահմանակից է Վրաստանին և Թուրքիային, իսկ վերջինիս հետ ունի նաև անդրսահմանային բնույթ: Տարածքի մեջ մտնում են Ախուրյանի և Մեծամորի (առանց Քասախի) ջրհավաք ավագանները՝ 5029 կմ<sup>2</sup>

Խոսքական և օրենսդրական համար ՀՀ նախարարության կողմէ



ընդհանուր մակերեսով: Ախուրյանի գետավազանը ՀՀ տարածքում կազմում է Կարս-Ախուրյան անդրսահմանային գետավազանի մոտ 30%-ը:

Զքավազանային տարածքը ներառում է 6 քաղաքային և 235 գյուղական բնակավայր, որից 134-ը՝ Շիրակի, 42-ը՝ Արագածոտնի, 64-ը՝ Արմավիրի և 1-ը՝ Արարատի մարզում են: Ախուրյանի ԶԿՏ-ում է գտնվում բնության հատուկ պահպանվող երկու տարածքներ (ԲՀՊՏ): 62000 հա ընդհանուր մակերեսով՝ «Արփի լիճ» ազգային պարկը և 219,85 հա ընդհանուր մակերեսով «Որդան կարմիր» պետական արգելավայրը, որոնց գործունեության հիմնական նպատակն է հկոհամակարգերի ապահովումը: Տարածքում կան նաև բնության 25 հուշարձաններ:

Ախուրյանի ԶԿՏ-ի մակերևությային ջրերը լայնածավալ օգտագործվում են տարբեր նպատակներով: Մի քանի հիմնական ջրամբարներով կարգավորվում է գետային հոսքը՝ էներգիայի արտադրության, ոռոգման և արդյունաբերական նպատակներով: Տարածքի ստորերկրյա ջրային ռեսուրսները հանդիսանում են խմելու հիմնական ու կարևորագույն աղբյուր Շիրակի և Արմավիրի մարզերի, մասնավորապես՝ Գյումրի և Արմավիր քաղաքների համար: Ստորերկրյա ջրերը կազմում են Արարատյան արտեզյան ավազանի մաս և համարվում են Հայաստանի խմելու ջրի ռազմավարական պաշար:

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսները ընդամենը կազմում են 3752,7 մլն մ<sup>3</sup>, այդ թվում՝ բազմամյա բնական գետային հոսքը՝ 2593,4 մլն մ<sup>3</sup>, ստորերկրյա ջրային պաշարները՝ 1130,1 մլն մ<sup>3</sup>, բնական լճերը՝ 0,023 մլն մ<sup>3</sup>, ջրամբարների մեջյալ ծավալը՝ 28,09 մլն մ<sup>3</sup>, ձնաբժերը՝ 1,05 մլն մ<sup>3</sup>:

Բազմամյա բնական գետային հոսքը ներառում է նաև Մեծամորի գետավազանում Արաք և Ախուրյան գետերի միախառնումից ներքև ընկած հատվածից վերցվող Հայաստանի հասանելի ջրի քանակը՝ 1114,9 մլն մ<sup>3</sup>, ինչպես նաև Ախուրյանի գետերի Էկոլոգիական թողքը՝ 194,5 մլն մ<sup>3</sup> և Մեծամորի գետավազանի գետերի Էկոլոգիական թողքը՝ 106,0 մլն մ<sup>3</sup>:

Ախուրյանի ԶԿՏ-ի ստորերկրյա ջրերի պաշարները կազմում են 1130,1 մլն մ<sup>3</sup>, այդ թվում՝ A+B կարգի ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները՝ 895,4 մլն մ<sup>3</sup>, C<sub>1</sub> կարգով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները՝ 35,1 մլն մ<sup>3</sup> և C<sub>2</sub> կարգով հաստատված ստորերկրյա պաշարները կամ խորքային հոսքը՝ 199,6 մլն մ<sup>3</sup>:

Ախուրյանի ԶԿՏ-ի 2 գետավազանների (Ախուրյան, Մեծամոր) ջրային ռեսուրսների պաշարները՝ բազմամյա միջին տարեկան կտրվածքով ներկայացված են հետևյալ արժեքներով՝ օգտագործելի ջրային ռեսուրսներ՝ 3188,3 մլն մ<sup>3</sup>, ռազմավարական ջրային պաշար՝ 41,83 մլն մ<sup>3</sup>, ազգային ջրային պաշար՝ 522,54 մլն մ<sup>3</sup>:

Ախուրյանի գետավազանի տարածքը 2784 կմ<sup>2</sup> է, տարածվում է արևելքից արևմուտք 54 կմ, իսկ հյուսիսից հարավ՝ 115 կմ: Գետավազանն ունի համեմատաբար թույլ զարգացած ջրագրական ցանց, գետային ցանցի միջին խտությունը կազմում է 0,53 կմ/կմ<sup>2</sup>, իսկ հոսքի մոդուլի արժեքը՝ 5 լ/վրկ կմ<sup>2</sup>: Գետային ցանցն ամբողջությամբ պատկանում է Արաք գետի ավազանին, որն անդրսահմանային է Թուրքիայի հետ: Ավազանում ամենատարածված գոտին լեռնատափաստանայինն է:

Ախուրյանի գետավազանում ներկայում գործում է ջրառի 62 կետ, որոնցից 36-ը՝ ստորերկրյա, իսկ 26-ը՝ մակերևությային աղբյուրներից են: Ստորերկրյա ջրերի գերակշիռ մասը օգտագործվում է խմելու-կենցաղային նպատակով: Ախուրյանի ավազանում գետային հոսքի քանակական մոնիթորինգ իրականացվում է 11 գետային և 2 լճային ջրաչափական դիտակետերում՝ Արփի լճի և Ախուրյանի ջրամբարների վրա: Տարբեր տարիների Ախուրյանի ավազանում գործել է հիդրոլոգիական 29 դիտակետ:

Մեծամորի գետավազանի ընդհանուր մակերեսը 2245 կմ<sup>2</sup> է, առավելագույն ձգվածությունը արևելքից արևմուտք 61 կմ է, իսկ հյուսիսից հարավ՝ 52 կմ: Գետային ցանցն Արաքի ավազանի մաս է կազմում, ունի բացառապես ստորերկրյա սնում:

Ավագանն ունի թույլ զարգացած ջրագրական ցանց, գետի երկարությունը 38 կմ է, գետային ցանցի խտության միջինը կազմում է 0,4 կմ/կմ<sup>2</sup>. իսկ հոսքի մոդուլի արժեքը՝ 9,6 լ/վ.կմ<sup>2</sup>: Մեծամորի ավագանում գետային հոսքի քանակական մոնիթորինգ իրականացվում է ջրաշափական 3 դիտակետում, մինչդեռ տարբեր տարիներին գործել է 6-ը: Գետավազանում իրար են հաջորդում կիսաանապատայինից մինչև բարձր լեռնային ալպյան և նիվալ գոտիների լանդշաֆտներ:

Մեծամորի գետավազանում ներկայում ջրառ է կատարվում 121 կետից, որոնցից 104-ը՝ ստորերկրյա, իսկ 17-ը՝ մակերևությային աղբյուրներից: Մեծամոր գետի ավագանում ստորերկրյա ջրերն օգտագործվում են խմելու, ձկնաբուծության և ոռոգման նպատակներով:

Ախուրյանի գետավազանում միակ խոշոր բնական լիճը Արփին լիճն է, որը վերափոխվել է լիճ-ջրամբարի: Լիջ սկիզբ է առնում Ախուրյան գետը: Ջրամբարի ջրերը օգտագործվում են ոռոգման և Գյումրիի ՀԷԿ-ի համար էներգիայի արտադրության նպատակներով: Մեծամորի ավագանում շատ են փոքր լճերը, համեմատաբար մեծերից են Մեծամորը (Ակնալիճ, Այղը) և Ավագահանքի լճերը: Լիճն ունի արհեստական ծագում, սնվում է ստորերկրյա՝ 200-250 լ/վ ընդհանուր ելքով աղբյուրներից և օգտագործվում է Արարատյան դաշտի հողերի ոռոգման նպատակով: Ախուրյանի գետավազանում գործում են 9 ջրամբարներ, իսկ Մեծամորի ավագանում՝ 21-ը: Ջրամբարների ջուրն օգտագործվում են տարբեր նպատակներով:

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում Ախուրյանի և Մեծամորի գետավազաններում էական ճնշումների բացահայտման և բնապահպանական նպատակների սահմանման նպատակով ԶԿՏ-ում վերլուծության են էնթարկվել ճնշում-ազդեցությունները, հնարավոր ռիսկերը, աղտոտման կետային և ցրված աղբյուրները, հիդրոմորֆոլոգիական փոփոխությունները և զնահատվել է Ախուրյանի ԶԿՏ մակերևութային ջրային մարմինների քիմիական, կենսաբանական և հիդրոմորֆոլոգիական կարգավիճակները: Արդյունքների հիման վրա Ախուրյանի և Մեծամորի գետավազանների մակերևութային ջրային մարմինները դասակարգվել են ըստ քիմիական, կենսաբանական և հիդրոմորֆոլոգիական կարգավիճակների:

Քիմիական որակի տարրերի կարգավիճակը զնահատվել է՝ հիմնվելով 2011-2013թթ. ընթացրում հավաքագրված մոնիթորինգի տվյալների, ինչպես նաև դաշտային ուսումնասիրության արդյունքների վրա:

Կենսաբանական որակի տարրերի կարգավիճակի համար օգտագործվել է արագ կենսաբանական զնահատումը, որի հիմքում ընկած է բենթոսային մակրոանողնաշարավորների համակեցությունների տվյալները:

Հիդրոմորֆոլոգիական որակի տարրերի կարգավիճակը զնահատվել է՝ հիմնվելով ԵՄ «Անդրսահմանային գետերի կառավարման II փուլ՝ Քուո-Արաքս գետավազան. Հայաստան, Վրաստան, Աղրբեջան» ծրագրի շրջանակներում մշակված արդյունքների վրա:

Մակերևութային և ստորերկրյա ջրային մարմինների համար շրջակա միջավայրի որակի կամ բնապահպանական նպատակների սահմանումը գետավազանային կառավարման պլանավորման գործընթացի հիմնական քայլն է: Այն նպատակառութղված է բոլոր տարանջատված ջրային մարմինների համար «լավ» էկոլոգիական կարգավիճակի ապահովմանը ու պահպանմանը, ինչպես նաև ԲՀՊՏ-ների համար սահմանված հատուկ պահանջների կատարմանը՝ ԵՄ ԶՇԴ-ին համահունչ մշակված պահանջներին համապատասխան:

Ախուրյանի ԶԿՏ-ում գյուղատնտեսությունը համարվում է տնտեսության առաջնային ճյուղերից մեկը: Ոռոգման ենթակառուցվածքների վատթար վիճակի պատճառով ջրակորուստները ցանցում կազմում են մոտ 50%, ինչի պատճառով Ախուրյանի ԶԿՏ-ի

ստորին հատվածում (Մեծամորի գետավազանում) շուրջ 18000 հա գյուղատնտեսական նշանակության ոռոգելի հողեր չեն մշակվում:

2016 թ. հունվարի 1-ի դրությամբ Ախուրյանի ԶԿՏ-ում գործում են 85 ձկնային տնտեսություններ, տարեկան 157,3 մլն մ<sup>3</sup> թույլատրված ջրօգտագործմամբ և 141,6 մլն մ<sup>3</sup> թույլատրված հետադարձ հոսքով: Ջրառը հիմնականում իրականացնում են 176 ստորերկրյա բարձրորակ ջրաղբյուրներից: Արմավիրի մարզում ձկնային տնտեսությունների ջրառն իրականացնում են Արարատյան դաշտի ստորերկրյա ջրատար հորիզոններից, իսկ հետադարձ ջրերը վերադարձնում են մակերևութային ռեսուրս (Մեծամոր և Արար գետեր):

Ախուրյանի ԶԿՏ-ում ներկայումս գործում են 12 ՓՀԵԿ-եր, որոնք կարող են զգալի ձևավոր գործադրել ջրային ռեսուրսների վրա: Ամենահզորը Գյումրի ՀԵԿ-ն է, որն աշխատում է 6,4 մ<sup>3</sup>/վ հաշվարկային ելքով, իսկ Արմավիրի մայր ջրանցքի վրա ամենահզոր ՓՀԵԿ-ն աշխատում է 22 մ<sup>3</sup>/վ հաշվարկային ելքով:

Ներկայումս Մեծամորի գետավազանում ստորերկրյա ջրառի թույլտվությունների քանակը շուրջ 6 անգամ զերազանցում է մակերևութային ջրառի քանակին՝ պատճառը վերջին տարիներին Արարատյան դաշտի խորքային շերտերից հանված ստորերկրյա ջրերի օգտագործվումն է ձկնաբուծության և ոռոգման նպատակներով, ինչը անմիջական ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա:

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում ջրային ռեսուրսների բարելավումն ըստ ոլորտների տաղու նպատակով գետավազաններում կանխատեսվել է ջրառաջարկն ու ջրապահանջարկը՝ կառավարման պլանավորման առաջին վեցամյա ժամանակահատվածի համար: Կանխատեսվող ջրառաջարկը գնահատվել է՝ հաշվի առնելով գետավազաններում տնտեսական զարգացման միտումները և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա: Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում կանխատեսված ջրառաջարկի և ջրապահանջարկի համադրությամբ գնահատվել է ջրավազանում ջրային ռեսուրսների դեֆիցիտը կամ պրոֆիցիտը՝ 2016 թվականից մինչև 2022 թվականը: Ստորև բերվում են Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում ջրառաջարկի և ջրապահանջարկի միտումներն ըստ ջրօգտագործման ոլորտների:

Գետավազանական մասնակիություն	ԶԿՏ-ում գործում ըստ ոլորտների	Ջրաքանակը, մլն. մ <sup>3</sup>						
		2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Ախուրյանի մասնակիություն	Խմելու-կենցաղային	154,1	152,5	150,8	149,3	147,7	146,2	144,6
	Ոռոգում	1343,3	1365,9	1388,6	1411,5	1434,6	1457,5	1481,1
	Արդյունաբերություն	40,7	42,2	43,7	45,2	46,7	48,2	49,8
	Ձկնաբուծություն	157,3	157,3	157,3	157,3	157,3	157,3	157,3
	Հիդրոէներգետիկա	220,7	218,0	215,4	212,7	210,1	207,4	204,8
	Ընդամենը ջրապահանջարկ	1916,1	1935,9	1955,8	1976,1	1996,4	2016,7	2037,5
	Ջրառաջարկ	3188,3	3171,9	3155,3	3138,9	3122,3	3105,9	3089,5
	Դեֆիցիտ/պրոֆիցիտ	1272,2	1236,0	1199,5	1162,8	1125,9	1089,2	1052,0

Ջրառաջարկի և ջրապահանջարկի համադրությունը ցույց է տալիս, որ հաշվարկային ժամանակահատվածում ջրառաջարկի դեֆիցիտ չի առաջանա:

Կանխատեսվող կլիմայի փոփոխության պայմաններում ջրի հեռանկարային պահանջարկի աճի բավարարման համար Ախուրյանի ԶԿՏ-ում նախատեսվում է կառուցել երկու նոր ջրամբարներ՝ Սելավ-Մաստարա, որը տեղակայվելու է Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքում՝ Սելավ-Մաստարա գետի վրա: Մեկ այլ ծրագիր կապված է մասսամբ կառուցված Կապսի ջրամբարի վերականգնման հետ: Նախատեսվում է ջրամբարը վերականգնել ջրի ցածր մակարդակով՝ ապահովելով 6 մլն.մ<sup>3</sup> տարողունակություն և ոռոգման ջրի ինքնահոս մատակարարում:

Նախագծում Ախուրյանի ԶԿՏ-ի համար գնահատվել և վերլուծվել են հնարավոր ռիսկերը և ազդեցությունները տարբեր տնտեսական գործունեություններից:

Թափոնների կառավարմանն առնչվող հիմնահարցերը մնում են առաջնային ու արդիական, քանի որ բացակայում են սանիտարահիգիենիկ, քաղաքաշինական պահանջներին համապատասխան կենցաղային թափոնների աղբավայրերը: Ներկայումս ԶԿՏ-ի տարածքում շաքարի գործարանի արտադրական և հեղուկ թափոնների հեռացման և կուտակման վայրն անհայտ է և գործարանի արտադրական հոսքերն առանց նախնական մաքրման հեռացվում են ջրային ռեսուրսներ, ինչը հանդիսանում է ստորերկրյա ջրերի և շրջակա տարածքների աղտոտման աղբյուր:

Գնահատվել է նաև ավագանի կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ներգործությունը ջրային ռեսուրսների որակի վրա: Համաձայն արդյունքների՝ աղտոտման կետային աղբյուրներից կենցաղային կեղտաջրերն էական ձնշում են գործադրում Ախուրյանի գետավազանի ջրային ռեսուրսների վրա: Ախուրյանի գետավազանում արդյունաբերական կազմակերպությունների մեծ մասը գտնվում է Գյումրի քաղաքում և արտադրական կեղտաջրերը ներկայումս թափվում են Գյումրի քաղաքի կոյուղու ցանց, իսկ Մեծամորի գետավազանում որպես կենցաղային կեղտաջրերի էական ձնշումների աղբյուրներ դիտարկվում են Արմավիր, Մեծամոր և Թալին քաղաքները, որոնցում գործող կողեկտորում կոյուղաջրերն առանց մաքրման արտահոսվում են բաց ջրային մարմիններ:

Աշոցքի տարածաշրջանի երկարի և մոլիխդենի հանքաքարի պաշարները ևս էական ձնշում են գործադրում Ախուրյան գետի Աշոցք վտակի վրա, իսկ Կարկաչուն գետի վրա էական ձնշում են հանդիսանում շինանյութերի արդյունահանումն ու մշակումը:

Անասնապահությունը ևս էական ձնշում է գործադրում Ախուրյանի ԶԿՏ ջրային ռեսուրսների որակի վրա:

Մեծամորի գետավազանում շինանյութերի, հիմնականում՝ տուֆի, անդեգիտարագալտների, պեղութային ավագների և խարամների արդյունահանման աշխատանքները (թվով 50 հանքավայրերի շահագործումը) և Արմավիրի արդյունաբերական կեղտաջրերի արտահոսքերը (0.015 մ<sup>3</sup>/վ) Մեծամոր գետի ջրի որակի վրա էական ազդեցություն չունեն: Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ գետավազանի ջրի որակի վրա ԱԷԿ-ը ևս ազդեցություն չունի:

Ախուրյանի ԶԿՏ-ում կոշտ թափոններն ունեն որոշակի լոկալ ազդեցություն գետավազանի ջրի որակի վրա, սակայն յի կարող համարվել էական: Ախուրյանի ԶԿՏ-ում օգտագործված ազոտական պարարտանյութերը և գերարածեցումը ևս էական ձնշում չեն գործադրում ջրավազանի գետերի ջրի որակի և ԶԿՏ-ի ջրային մարմինների վրա:

Ախուրյանի գետավազանում ձկնարտադրությունը ձնշում չի գործադրում գետավազանի մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների քանակի և որակի վրա, քանի որ ձկնային տնտեսությունների կողմից իրականացվող ջրառը գետավազանում կազմում է ընդհանուր ջրառի 1,9%-ը: Սակայն Մեծամորի գետավազանում ձկնարտադրության նպատակով ջրառը զգալի ձնշում է գործադրում Մեծամոր գետի, ինչպես նաև ստորերկրյա, մասնավորապես՝ գետավազանի Արմավիրի և Վաղարշապատի տարածաշրջաններում, և մակերևութային ջրերի վրա:

Ախուրյանի և Մեծամորի գետավազաններում արդյունաբերական նպատակներով ջրօգտագործումը նույնապես էական հիդրոմորֆոլոգիական ձնշում չի գործադրում ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա, քանի որ իրականացվում է փոքր ծավալներով (տարեկան 36,8 մ³): Անսիջապես գետերից ջրառ իրականացնող պոմպակայանների և ջրանցքների գլխամասային ջրընդունիչ կառուցվածքները ևս էական ձնշում չեն գործադրում և չեն ազդում գետերի մորֆոլոգիայի և հիդրոլոգիական ռեժիմի վրա:

Ելնելով ձնշում-ազդեցություն վերլուծության արդյունքներից Ախուրյանի ԶԿՏ-ում տարանջատվել են 61 մակերևութային ջրային մարմիններ, որոնցից.

- 26-ը բնական ջրային մարմիններ են, որոնք ոիսկային չեն
- 10-ը ոիսկային ջրային մարմիններ են,
- 4-ը հնարավոր ոիսկային ջրային մարմիններ են,
- 13-ը արհեստական ջրային մարմիններ են, ներառյալ՝ 12 ջրանցք ու լճակների 1 խումբ,
- 8-ը խիստ փոփոխված ջրային մարմիններ են (ջրամբարներ):

Ախուրյանի ԶԿՏ-ում հատկորոշված ոիսկային ջրային մարմինների ընդհանուր երկարությունը 111 կմ է, որը կազմում է ամբողջ գետային ցանցի երկարության մոտ 12%-ը, իսկ հնարավոր ոիսկային ջրային մարմինների ընդհանուր երկարությունը 32,6 կմ է և կազմում է ամբողջ գետային ցանցի երկարության 3,5%-ը):

Ախուրյանի ԶԿՏ-ում հատկորոշվել և նախապես բնութագրվել է 9 ստորերկրյա ջրային մարմիններ, որոնք բացառությամբ հանքային ջրերի հանքավայրերի, օգտագործվում են խմելու, գյուղատնտեսական և կամ արդյունաբերական նպատակներով ջրամատակարարման համար 10 մ³/օր ընդհանուր ջրառու: Հանքային ջրերը նախատեսվում է օգտագործել շահագույն և բուժիչ նպատակներով:

Կառավարման պլանը ներառում է հիմնական միջոցառումներ, որոնք նպատակա-նողված են ջրային մարմինների կարգավիճակի վատթարացման կանխարգելմանը, ջրային մարմիններում ջրի կարգավիճակի փուլային բարելավմանը և պահպանմանը, ջրօգտագործման տեսակետից ջրերի կառավարման բարելավմանը (թույլտվություններ, լիցենզիաներ), ինչպես նաև լրացուցիչ միջոցառումներ, որոնք հիմնված են գետավազանային կառավարման պլանների մշակման ընթացքում հատկորոշված բացերի վրա և նպատակառողված են մոնիթորինգի, ազգային օրենսդրության և անձնակազմի տեխնիկական կարողությունների կատարելագործմանը՝ ապագայում ԵՄ ԶԵԴ-ին համահունչ կառավարման պլանների իրականացումն ապահովելու նպատակով: Հիմնական մկիցցառումները ներառում են

• Գյումրիի և Արմավիրի ազլումերացիաներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում, ինչպես նաև մաքրման կայանների կառուցում ազլումերացիաներից դուրս

• Գյուղատնտեսության վարման օրինակելի մեթոդների կիրառում  
• Գետի վերականգնում (Ախուրյան գետի 11 կմ երկարությամբ հատվածում գետի բնական պայմանների վերականգնում)

• Արդյունաբերության ոլորտում լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդնում

• Լրված և ապօրինի օգտագործվող ստորերկրյա ջրերի հորերի փակում:

Ախուրյանի ԶԿՏ-ում յուրաքանչյուր ազլումերացիայի համար առաջարկվել է ԿԱԿ հզորությունները, առաջնային (մեխանիկական) և երկրորդական (կենսաբանական) մաքրման մեթոդները:

Հայաստանում մակերևութային ջրերի մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» (ՇՄՆՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Ախուրյանի գետավազանում ջրի նմուշառում և դաշտային չափումներ

կատարվում է 10 դիտակետերից, որոնցից երկուսը գտնվում են ջրամբարների վրա (Ախուրյանի ջրամբար և Արփի լիճ), իսկ Մեծամորի գետավազանում ջրերի քանակական մոնիթորինգ իրականացվում է ջրաչափական 4 դիտակետերում, որոնցից մեկը՝ Արաքս գետի վրա: Ախուրյանի ավազանի երկու միջսահմանային դիտակետերից (Ախուրյանի գետաբերան և ջրամբար, որոնք գտնվում են հայ-թուրքական սահմանին) տարեկան կատարվում է 12 նմուշառում (ամեն ամիս), իսկ մնացած ութ դիտակետերից՝ տարեկան ութական նմուշառում և չափումներ:

Մակերևութային ջրերի որակի գնահատումը ՀՀ տարածքում կատարվում է որակի քիմիական ցուցանիշների հիման վրա: Հիդրոկենսաբանական և հիդրոմորֆոլոգիական գնահատում չի իրականացվում համապատասխան մոնիթորինգի և տվյալների բացակայության պատճառով:

ՀՀ ջրային ռեսուրսների քանակական և ռեժիմային դիտարկումներն ու ուսումնասիրություններ իրականացվում են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից: Ախուրյանի գետավազանը սպասարկում է Գյումրի հիդրոլոգիական կայանը, իսկ Մեծամորի գետավազանը՝ Քասախ-Մեծամոր (Սևջուր) հիդրոլոգիական կայանը:

Ախուրյանի ԶԿՏ-ում կենսաբանական մոնիթորինգ չի իրականացվում:

Առանձին մակերևութային ջրային մարմինների համար էկոլոգիական հոսքի մեծությունները սահմանվում են տարեկան և ամսական կտրվածքներով՝ ելնելով ջրային մարմնի հիդրոլոգիական, հիդրոմորֆոլոգիական, հիդրոքիմիական և հիդրոկենսաբանական առանձնահատկություններից:

Տարանջատված մակերևութային և ստորերկրյա ջրային մարմինների համար սահմանված բնապահպանական նպատակները, ներառյալ Ախուրյանի ԶԿՏ-ի ԲՀԴՏ-ների համար սահմանված հատուկ պահանջները, սահմանվել են ԵՄ ԶԵԴ ծրագրի շրջանակներում (ունենալ համահունչ «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլան մինչև 2021 թ. և ապահովել կառավարման պլանով սահմանված պահանջների կատարումը մինչև 2027 թ.):

Միջոցառումների ծրագիրը ևս մշակվել է հիմնվելով ԵՄ ԶԵԴ ջրավագանի ելակետային պայմանների և մակերևութային ու ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա մարդածին ազդեցությունների վերլուծություններից և սահմանում է այն գործողությունները և կանոնակարգող մեխանիզմները, որոնք պետք է իրականացվեն Ախուրյանի ԶԿՏ-ում ջրի լավ կարգավիճակն ապահովելու համար: Այդ միջոցառումները ներառում են՝

- Ախուրյանի ԶԿՏ-ում մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի նոր, համապարփակ համակարգի մշակում,
- Աղետների կառավարման պլանի մշակում,
- Մակերևութային ջրային ռեսուրսների էկոլոգիական և քիմիական կարգավիճակի, ինչպես նաև ստորերկրյա ջրային ռեսուրսների քանակական և քիմիական կարգավիճակի գնահատման նոր համակարգերի մշակում,
- Ախուրյանի ԶԿՏ-ում փաստացի ջրօգտագործման կենտրոնացված, առցանց վերահսկման համակարգի փուլային ներդրման ծրագրի մշակում,
- Ախուրյանի ԶԿՏ-ում տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների պայմանների վերանայում և իրավական բարելավում:

Ախուրյանի ջրավագանային կառավարման պլանի միջոցառումների ծրագրում ամփոփվել են նաև իրականացման ժամկետները և պատասխանատու կազմակերպությունները:

Միջոցառումների իրականացման ծախսերի նախնական արժեքը գնահատվել է 30908,04 մլն. ՀՀ դրամ (որի մեջ մտնում են նաև միջազգային դրոնոր

կազմակերպությունների և մասնավոր կազմակերպությունների կողմից հատկացվող միջոցները): Ախուրյանի ԶԿՏ-ի գետավազանային կառավարման պլանի միջոցառումների ծրագրից ընտրել և ֆինանսավորել է 5 պիլոտային ծրագրի իրականացումը, այդ թվում՝ ավտոմատ չափիչ սարքավորումներով հազեցում, հիդրոլոգիական և ստորգետնյա մոնիթորինգի հսկողություն, ջրօգտագործման թույլտվության պայմանների բարելավում և այլն:

Փաստաթղթի փորձաքննության փուլերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ Արմավիրի մարզպետարանում 2 ամգամ (21.07.2016թ և 04.11.2016թ.) անցկացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում հիմնադրութային փաստաթղթում առաջարկվող դրույթները մասնակիցների կողմից արժանացան հավանության:

**Եզրահանգում:** Ամփոփելով հաշվետվության գնահատման և փորձաքննության արդյունքները պետք է նշել, որ ծրագրի իրականացումը կունենա կարևոր ռազմավարական նշանակություն: Այս կարող է նպաստել Ախուրյանի ԶԿՏ-ում ջրային ռեսուրսների նպատակային օգտագործմանը և արդյունավետ կառավարմանը: Հիմնադրութային փաստաթղթի գործողության ընթացքում Ախուրյանի ԶԿՏ-ում մակերևութային, ինչպես նաև ստորերկրյա ջրային ռեսուրսների էկոլոգիական իրավիճակի մոնիթորինգի միջոցով կզնահատվեն և կբացահայտվեն ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և այլ փոփոխությունները, իսկ արդյունքները հիմք կհանդիսանան կանխարգելիչ գործողությունների կիրառման համար:

### Փորձաքննական պահանջ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախազգային փաստաթղթեր՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գեղինֆո» ՍՊԸ կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված Ախուրյանի ջրավագանային տարածքի կառավարման պլանի 2017-2022 թթ միջոցառումների ծրագրի ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:



Մասնագետ՝

Հ. Մկրտչյան